

Հ. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

ՀՈՎՀ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

891.99.09 [Հոգիանշխարհ] 10464

7-36 | 7 աշխատանք, 3.

Հոգիանշխարհ Հոգիանշխարհ.

(Գրական դասեր.) 302

28/x	28/x	79
20/xii	30/xii	182
16/v	18/x	448
7/ii 59	11/ii	563
29/xi 60		30


991.99.032 [Հովհաննիսյան]
Հ. ՂԱՆՈՒԼՆՈՒՆ

Ղ

ԱՅՈՒԳԱՄԻ Է 1961 թ.


ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

(ԴՐԱԿԱՆ ԴԻՄԱՆԿՈՐ)



A $\frac{\pi}{31793}$ 10464

О. ГАНАЛАНИН
ИОАННЕС ИОАННИСЯН
(Литературный облик)
(На армянском языке)
Аргиз, Ереван, 1946 г.



К тебе приблизиться,—то значит,
 Познать души прекрасной свет,
 Кто уручен, кто тайно плачет,
 Тот ищет строф твоих, поэт
 В армянской новой жизни начат
 Твоей поэзией яркий след.

В. БРЮСОВ

Հովհաննես Հովհաննիսյանը՝ մեր նոր բանաստեղծու-
 թյան այդ ռահվիրան, գրական ասպարեզ է իջել անցյալ
 դարի 80-ական թվականների վերջերին: 1887 թվին էր, երբ
 Մոսկվայում լույս տեսավ նրա բանաստեղծությունների
 անդրանիկ գրքուկը: Ղազարոս Աղայանը առաջիններից
 եղավ, որ ողջունեց նորընծա բանաստեղծի մուտքը հայոց
 գրականության անդաստանը: Մի ժամանակաշրջան էր այդ,
 երբ, ինչպես նկատել է Վ. Բրյուսովը, «Շահազիզի պոետա-
 կան գործունեությունը ժամանակավորապես խզվել էր, իսկ
 Պատկանյանը դարձել էր փոքր ինչ սակավ ինտենսիվ»¹:

Ինչպես հայտնի է, Հովհաննիսյանի անմիջական բա-
 նաստեղծ նախորդների՝ Նալբանդյանի, Պատկանյանի, Շա-
 հազիզի պոեզիան հրապարակախոսական բնույթ ուներ:
 «Նախ քաղաքացի, և ապա պոետ» նշանաբանով էին ընթա-
 նում Հովհաննիսյանի այդ նախորդ երգիչները, որոնք բա-
 նաստեղծական ստեղծագործության մեջ առաջնությունը տա-
 լիս էին իրենց քաղաքացի գաղափարներին, ավելի սակավ հոգ
 տանելով այդ գաղափարների գեղարվեստական դրսևորման
 գործին: Հովհաննիսյանը տարբերվեց իր նախորդներից նրա-

¹ В. Брюсов — «Поэзия Армении», 1916 г., Москва, стр. 76.

նով, որ յուր անհատական խառնվածքով լինելով իսկական լիրիկ, առանց հրապարակախոսելու՝ հարուստ էմոցիաներով, անձնական, անհատական վիշտն ու խնդովյունը կարողանում էր համադրել հասարակականի ու ազգայնի հետ, և այնպես, որ նրա երգերը կարդացողները հաճախ դժվարանում են որոշել, թե ո՞րն է պոետի անձնականից բխած վիշտը և ո՞րը հասարակականը: Հովհաննիսյանը տարբերվեց իր նախորդներից նրանով էլ, որ մեծ ուշադրություն դարձրեց նաև բանաստեղծության արվեստին, ձևի և բովանդակության ներդաշնակությունն որոնեց, լավ իմանալով, որ երկար կապրի այն բանաստեղծական խոսքը, ուր առաջավոր գաղափարները տրված են գեղեցիկ ձևերով:

Միայն այն կապրի, որ միշտ է անմահ,
Սուրբ գեղեցկություն և սուրբ գաղափար:

Այս նշանաբանով է զարդարել Հովհաննիսյանը իր բանաստեղծությունների ժողովածուի ձևակալը:

Ձևի և բովանդակության ներդաշնակությամբ գրված «սրտի խոսք» և «նոր շունչ» բերող Հովհաննիսյանի պոեզիան գալիս էր վերաորակավորելու արևելահայ բանաստեղծությունը, մի նոր աստիճանի վրա բարձրացնելով այն:

Նախքան Հովհաննիսյանի ստեղծագործությունների վերլուծման անցնելը, մի քանի խոսք նրա կյանքի կարևոր դրվագների մասին:

Հ. Հովհաննիսյանը ծնվել է էջմիածնում 1864 թվի մայիսի 8-ին, նրա հայրը՝ Մկրտիչ Հովհաննիսյանը բնիկ էջմիածնեցի էր, մեկն այն արդար գյուղացիներից, որոնք իրենց հացը ձևակառի քրտինքով էին վաստակում: Գրագետ, ուսման հարգը իմացող մարդ է եղել պոետի հայրը, քաջածանոթ մայրենի բարբառին:

Պոետի մայրը՝ Անուշկա Տեր-Մեսրոբյանը, անգրագետ մի կին էր, կատարյալ տիպար անհապետական հայ կնոջ, օրն իբրև դաշտային և առտնին աշխատանքների լծված՝ հոգում էր ընտանիքի հոգսերը: Հիշատակության ար-

ժանի է նաև պոետի հորեղբայրը, Հովհաննես անունով։
 Արթուր մտքի տեր, գրագետ գյուղական մի երիտասարդ,
 օժտված բանաստեղծելու ձիրքով։ Վաղամեռիկ այս երիտա-
 սաճիկ անունով էր, որ ծնողները կոչեցին իրենց ապագա
 բանաստեղծ որդուն։ Պատանի Հովհաննեսը հոր օգնությամբ
 գրաճանաչ դառնալուց հետո, ընդունվում է էջմիածնի ծխա-
 կան ուսումնարանը, այնուհետև ծնողները տանում են Հով-
 հաննեսին Նրեան և ընդունել տալիս տեղի պրոգիմնազիան։
 Այստեղ Հովհաննեսը սովորում է մինչև 1877 թվականը և
 նույն թվի աշնանը մեկնում է Մոսկվա ընդունվելով կազա-
 րյան ճեմարանի երրորդ դասարանը, ուր և մնում է իբրև
 գիշերօթիկ։ Ճեմարանում Հովհաննեսյանն աշակերտում է
 բանաստեղծ Սմբատ Շահազիզյանին, և նրա բարերար ազ-
 դեցության տակ սկսում է ավելի եռանդով քնարերգել իր
 բանաստեղծական հույզերը։ Այդ ժամանակ պոետը տակա-
 վին 15—16 տարեկան երազուն մի պատանի էր, բանաս-
 տեղծական «ցողով ու շաղով լցված»։ Հովհաննեսյանի առա-
 ջին տպագիր ոտանավորը՝ «Ջինջ երկնքից ոսկի արև տալիս
 է մեզ սիրո բարև» վերնագրով լույս է տեսել 1883 թվին Տիգ-
 րան Նազարյանի «Տարազ»-ում։ 1883 թվին արժաթե մեդա-
 լով ավարտելով ճեմարանը, բանաստեղծն ընդունվում է
 Մոսկվայի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլ-
 տետը, ուր իդեպ, լսում է այլ առաջնակարգ դասախոսների
 հետ նաև ռուս հռչակավոր պատմաբան Կլյուչևսկուն։ Հա-
 մալսարանական կյանքի այդ շրջանում Հովհաննեսյանը ձեռ-
 ներեցություն է հանդես բերում ռուսնողական գրական խմբ-
 բակի կազմակերպման գործում և գործոն մասնակցություն
 ունենում խմբակի գրական աշխատանքներին։ Գրական
 այդ խմբակի հավաքած գրամական միջոցներով է, որ 1887
 թվին Մոսկվայում լույս է տեսնում Հովհաննեսյանի բանաս-
 տեղծությունների անդրանիկ գրքուկը, որը մեկից իր վրա է
 հրավիրում արևելահայ և արևմտահայ գրական հասարակա-
 նության ուշադրությունը (նկատի ունենք Ալիշանին, Բա-
 շալյանին, Աղայանին, որոնք խորտե ողջունեցին երիտա-

սարդ պոետի մոտքը հայ գրականության անդաստանը): Համալսարանական կյանքի այդ տարիներին բանաստեղծն ուշի ուշով հետևում է Մոսկվայի գրական կյանքի ընթացքին: Այդ շրջանին է վերաբերվում անջնջելի այն տպավորությունը, որ թողել է Հովհաննիսյանի վրա Դոստոյևսկու արտասանած ձառը Պուշկինի արձանի բացման առթիվ: Գրական այդ հավաքույթում է, որ առաջին անգամ մեր բանաստեղծը բախտ է ունենում տեսնելու նաև ալեգարդ Տուրգենևիին, որի «Записки охотника» պատմվածքների ժողովածուն նրա գրասեղանի մշտական զարդն է եղել, և ինչպես վկայում են պոետի հարազատները, բանաստեղծը նպատակ է ունեցել թարգմանել այն, բայց տարաբախտաբար այլ կարևոր ձեռնարկությունների հետ այդ գործն էլ անկատար մնաց: Ուսանողական կյանքի այդ տարիներին էր, որ Հովհաննիսյանը Պուշկինի, Լերմոնտովի, Հայնեի հետ միասին առանձին սեր էր տածում նաև Հյուգոյի նկատմամբ, կարդում էր նրան բնագրում և հիանում: Պատմում են, որ Հյուգոյի մահը, որ տեղի ունեցավ 1885 թվին, մեծ վիշտ է պատճառում հայ պոետին և նա Մոսկվայի հայ ուսանողության անունից ցավակցական մի նամակ է ուղարկում պոետի հարազատներին, որի մեջ դառնորեն ողբում է «բանաստեղծության այդ մեծ մոգպետի» մահը: Հայ բանաստեղծի ցավակցական այդ նամակից խորապես հուզված Հյուգոյի հարազատները, ինչն այդ հարգանքի, ստեղծագործական երկար կյանք են ցանկանում հայ ժողովրդի բանաստեղծ դավակին:

Հովհաննիսյանը անձնական ծանոթություն և բարեկամական կապեր է սկսում հաստատել, դեռ ուսանողական նստարանից, ինչպես ռուս, այնպես էլ հայ արվեստի հայտնի ներկայացուցիչների հետ, մտերմական հարաբերությունների մեջ էր տիկին Սիրանուշի հետ, իսկ Ադամյանին ծանոթացել էր 1885 թ. 86 թվերին Մոսկվայում: Բախտի բերմունքով, թե՛ կյանքի և թե՛ թատրոնի բեմում դերասանությունից հետո բանաստեղծը, Ադամյանի առաջարկությամբ «Քին»-ի բե-

Վաղրուկայան մեջ Պիստոլի դերում է հանդես գալիս: Պոետի բեմին աչնպիսի անսպասելի հաջողություն է ունենում, որ ծածկվում է հանդիսատեսների ծափերի տարափի տակ: Ներկայացման ընդմիջման ժամանակ Ադամյանը մոտենում է երիտասարդ բանաստեղծին և կատակով քաշում ականջը ու ասում. — Իմ ներկայությամբ առաջին անգամն է, որ բեմի վրա հանդես եկող որևէ դերակատար արժանանա ծափահարության, և այն այդպիսի որոտընդոստ ծափահարության, կեցցես, թաքնված տաղանդ ես եղել:

Հովհաննիսյանի համալսարանական կյանքի այս շրջանը վերջանում է 1888 թվին: 24 տարեկան էր նա, երբ ավարտեց Մոսկվայի բարձրագույն ուսումնական այդ հաստատությունը և գրական-գիտական ու լեզվական մեծ գիտելիքներով վերադարձավ հայրենիք — Էջմիածին: Նույն թվի ամրանը Հովհաննիսյանն ուղևորվում է արտասահման, լինում է Անգլիայում, Ֆրանսիայում, Տաճկաստանում: Այցելում է Փարիզի և Լոնդոնի գրական նկարչական թանգարանները, գիտական հաստատությունները: Լուրջում եղած ժամանակ Մադոննայի նկարի առաջ հղանում է մի բանաստեղծություն և ապա գրի առնում:

Երեք ամիս տևող ճանապարհորդությունից հետո հարուստ տպավորություններով, բանաստեղծը վերադառնում է հայրենիք և նշանակվում էջմիածնի ճեմարանում ուսուց լեզվի և ընդհանուր գրականության դասատու, ուր մնում է ընդհուպ մինչև 1912 թվականը: Իր գրական և մանկավարժական գործունեության այս երկրորդ շրջանում, կարճ ժամանակով, Հովհաննիսյանը երկու անգամ տեղափոխվում է Թիֆլիս ուսուցչի և տեսչի պաշտոնով, և ապա վերստին վերադառնում էջմիածին: Շնորհիվ իր մեծ ու խոր գիտելիքների, և մեղմ ու համեստ բնավորության, Հովհաննիսյանը թե՛ էջմիածնում, և թե՛ ալլուր, վայելում է իր պաշտոնակիցների ու աշակերտության սերն ու հարգանքը:

Ավետիք Իսահակյանը, Հովհաննիսյանի մասին գրած իր հուշերում, պատմում է, թե ինչպես տակավին ճե-

մարանի սան եղած ժամանակ, իր գրական առաջին քայլերն անելիս խրախուսվել ու ցուցմունքներ է ստացել իր բանաստեղծ ուսուցչից: «Երբեմն հանգսնություն էի ունենում,—ասում է Իսահակյանը,—Հովհաննիսյանի մոտ կարդալ իմ բանաստեղծական թոթովանքները: Մի անգամ ձեմարանի բակում զբոսնելիս մոտեցա Հովհաննիսյանին, կարդացի իմ մի ոտանավորը՝ «Երկու համբույր» խորագրով (Սիրո և մահվան), ոտանավորիս ընթերցումը ուշադիր լսելուց հետո, պարոն Հովհաննիսյանը ինձ ասաց.—«խորհուրդ եմ տալիս դրել ապրած և զգացած բաների մասին, ոչ սիրո համբույրն ես գգացել և ոչ մահվան»։ Ուրիշ անգամներ էլ կարդացել եմ նրա մոտ իմ քնարական տրտունջները, երբեմն հավանում էր, երբեմն՝ ոչ: Հիշում եմ, շատ հավանեց «Ծաղիկ էի նորաբողբոջ» երգս):

Նյութական անապահով վիճակը, բազմանդամ ընտանիքի հոգսը մի կողմից, էջմիածնի անձուկ միջավայրը, ջրջապատի նեղ մտահորիզոնը կասեցնում էին նրա տաղանդի թափը, հեռու վանում նրանից պոետական միտք և երազանք: Եթե Մոսկվայի հնարավորության դռներ էր բաց անում բանաստեղծի մտավոր կյանքի զարգացման առաջ, ստեղծագործական ազդակներ տալիս պոետին¹, ապա ծննդավայրը հակառակ ազդեցություն ունեցավ: Տարիներ շարունակ էջմիածնի սինոդի ատենադպիրը դառնալով, ստեղծագործական աշխատանքի թանկագին ժամերին հաս ու չհասի մասին դրաբար արձանագրություններ կազմելով էր զբաղված. «անիծյալ հացի խնդիր», մտաբերում ենք Պոռշյանի խոսքերը: Պոետի հարազատները պատմում են, որ այդ պայմաններում շատ հաճախ վհատություն էր իջնում բանաստեղծի վրա և բնականից շուտ ընկճվող ու հուսահատվող մարդը դառնում էր ինքնամիտի, և դառն իրականությունից դուրս գալու ելք էր փնտռում, մերթ մտքով սլանում

¹ Հիշենք, որ նա էր կյանքի Մոսկվայի տարիներին հանդես է բերել ծայրահեղ գրական բեղմնավորություն, 1884—88 թվերին գրել է իր ամբողջ ստեղծագործությունների կեսից ալեկին:

այն անիրական աշխարհը, «ուր սերն է միշտ անթառամ», կամ առնում էր որսորդական հրացանը և նշանավոր վեստային (շանը) ու բաշվում բնության գիրկը: Բնությունը ոչ միայն ամոքում է պոետին, ցրում վիշտը, խաղաղում հոգին, այլ և բանաստեղծական վեհ խոհեր ծնում նրա մեջ: Հիշենք նրա բնության երգերը, որոնց մեջ բանաստեղծը խիզախում էր «աստղերի լեզվով» կարգալու բնությունը, հասկանալու հավքերի լեզուն:

Լինելով ժողովրդի մարդ, ժողովրդական երգի սիրահար, հաճախ Կոմիտասի՝ մեր ժող. երգերի այդ կախարդ վարպետի՝ հետ շրջել է նա գյուղերը, ջերմ հյուրընկալություն գտել շինականների կողմից, լսել նրանց ձայնը, թարգման դառել նրանց վշտերին թե՛ իր բանաստեղծություններում և թե՛ կյանքում: Անցնում են տարիներ: 1912 թվին բանաստեղծը էջմիածնից տեղափոխվում է Բաքու՝ քաղաքային ուսումնարանական հանձնաժողովի նախագահի պաշտոնով, ընդհուպ մինչև 1918 թվականը: Իդեպ 1915 թվին բանաստեղծը Բաքվից մեկնում է էջմիածին, որտեղից հայ գաղթականների մի ամբողջ էջևոն է տեղափոխում Բաքու, և իր հեղինակավոր միջամտությունը հարուցում համապատասխան մարմինների առաջ, հոգալու գաղթականների կարիքները: 1918 թվականին տաճկական բանակի առաջխաղացման հետևանքով սպասվող վերահաս կոտորածի վտանգից ազատ մնալու համար, Ստեփան Շահումյանի և Զափարիձեի այդ մասին արած նախազգուշական խորհուրդն ընդունելով, բանաստեղծը ընտանիքով նալ է նստում, նշանակվում այդ նալի կոմիսար և իր հետ գաղթեցնում ստվար քանակությամբ հայերի: Պոետի հարազատները պատմում են, որ Շահումյանն ու Զափարիձեն գալիս են նավակայան և ողջերթ մաղթում պոետին: Բանաստեղծ Տերյանը կիսրվողակում եղած ժամանակ լսելով, որ Հովհաննիսյանը Բաքվից գաղթել է էսենտուկի, շտապում է գնալ Իտես իր ավագ զրչակցին և բանաստեղծ ուսուցչին: Հովհաննիսյանի ընտանիքում սպասա-

ծից ավելի ջերմ ընդունելութուն է գտնում Տերյանը՝ 1919 թվին Հովհաննիսյանն ընտանիքով վերադառնում է հայրենիք ու նշանակվում է Էջմիածնի գավառի լուսբաժնի վարիչ, ուր մնում է մինչև 1922 թվականը։ Նույն այդ թվականին էլ տեղափոխվում է Երևան, որտեղ մի քանի տարի պաշտոնավարելուց հետո, դառնում է թոշակառու։ Այստեղ, — Երևանում մեր կառավարության կարգադրությամբ, բանաստեղծին հատկացնում են մի այգի, ուր անց է կացրել նա իր կյանքի վերջին տարիների մեծ մասը։ Իր կյանքի այս վերջին տարիներին պոետը գրեթե դադարել էր ստեղծագործելուց, իսկ 1929 թվին առհավետ լռեց նա. «Փիշրվեց զգացմունքի և երգի այդ չքնաղ սամիրը»։

Ինչպես ասացինք՝ Հովհաննիսյանը գրական ասպարեզ իջավ անցյալ դարի 80-ական թվականների վերջերին, երբ «Հայի փրկության ոսկի երազները», որ նախորդ շրջանի գրողները՝ Պատկանյանը, Բաֆֆին կապել էին Բեռլինի անփառունակ վեհաժողովի 61-րդ հոդվածի հետ, հօդս էին ցնդել արդեն։ Գերման բարբարոսները ո՛չ միայն չէին ազատագրել համիդյան ռեժիմի տակ հալ ու մաշ եղող հայերին, այլ ավելի էին հրահրել թուրքերին հայաջնջումը լիակատար դարձնելու։ Սուլթան համիդները վճռել էին Տաճկահայաստանում հայերին գերեզմանի տեղ միայն տալ. խեղճահեղ վճիռ։ Համիդյան կոտորածների օրերին գրված հայ ժողովրդի կրած ահավոր տառապանքների գրական վավերականներ են Հովհաննիսյանի այս կարգի երգերը.

եվ այսօր ահա արյան հեղեղից
Շառագունեցավ երկինքը վճիտ.
Անզոր հառաչանք, ճիչեր վշտալից,
Մեր երեսներից խլեցին ժպիտ։

Աչք ենք դարձնում ամենքս ակամա,
Դեպի այն տխուր հովիտն արտասվաց,
Ուր հայ գութանի երգն ամենօրյա
Դարձել է ավեր ողբացող մի լաց։

Բանաստեղծ Հովհաննիսյանի պոեզիան լինելով հայ-
րենիքի այդ ծանր օրերի հասարակական-քաղաքական կյան-
քի գրական արտահայտությունը, մեծ չափով տարբերվում
էր հայկական հարցի դրական լուծման երազանքներով
տարված նախորդ շրջանի հեղինակների նման երգերից:
Պարզ է ուրեմն, թե ինչու Հովհաննիսյանի երգերը չպետք է
ունենային Պատկանյանի բանաստեղծությունների մարտա-
կան ոգին, Պեշիկթաշլյանի զեյթունյան երգերի ոգևորող
շեշտերը, որոնք ավետում էին Տավրոսի լեռներում սուլ-
թանիզմի դեմ ազատագրական պայքարի դրոշ պարզած
զեյթունցիների հերոսական հաղթանակի լուրը: Հովհաննի-
սյանի հայրենասիրական երգերը տրտմելու ու լալու օրե-
րին գրած երգեր էին: Բանաստեղծը իր հոգու աչքերը դարձ-
նելով, ինչպես ինքն է ասում, «արտասովաց հովիտը», այս-
պես էր ողբում արևմտյան Հայաստանի վիճակը.

Այնտեղ հողն արյուն, արյուն են սարեր,
Զինջ աղբյուրներն էլ կտրել են արյուն,
Վտակը քերում արյունոտ քարեր,
Թառամեցնում է ծաղկավառ դարուն:

Արևմտահայերի ֆիզիկական ոչնչացման վտանգը մի
կողմից, արևելահայերի նկատմամբ ցարիզմի վարած հա-
յահալած քաղաքականության տագնապը մյուս կողմից,
ահով լցրին բանաստեղծի հոգին: Պոետը ականատեսի աչ-
քով տեսնում էր 1885 թվի և հետագա դեպքերը, երբ ամե-
նուրեք փակվում էին հայկական դպրոցները և կուլտուրա-
կան այլ հաստատություններ:

Ցարիզմից «պատվի բոժոժներ» ակնկալող հայ բուր-
ժուական մտավորականությունը ևս սկսել էր արհամարհել
մայրենի լեզուն ու գրականությունը, քաղցի էր ենթարկում
նրա մշակներին և փոխարենը տաճարներ էր կանգնեցնում
«ոսկի հորթին»: Խոսքն ուղղելով այդ այլասերված մտավո-
րականությանը, բանաստեղծն ասում է.

Երբ ոսկի հորթին տաճարներ կանգնած,
Մենք վաճառում ենք և խիղճ և ամոթ,
Եվ մեր անզգա կրծքին կախ տալով
Մի ցնորական պատվի բոժոժներ:

Այս բոլորից հետո պարզ է, թե ինչու բանաստեղծն
իր երգերում կոտրած սրտով պետք է երգեր բնության զար-
թոնքը, դարնան դալը, որն արտասուքի դարուն էր դարձել
նշա համար—

Սև մութ պատեց աշխարհին,
Սար ու ձոր դառան արին,
Մեղ վայ բերեց էս տարին,
Ո՛ւր ես գալի, ա՛յ գարուն:

Դու ետ բերիր հավքերին,
Ո՛նց տեր ընեն բներին,
Ուղ տեղ չկա մեր երկրին,
Ձուր ես գալի, ա՛յ գարուն:

Զարմանալի է, սակայն, Հովհաննիսյանի պոեզիայի,
ինչպես նաև ողջ հայ գրականության համար այն, որ աղա-
նատես լինելով սեփական ժողովրդի շարունակական ջար-
դերին և նրան ցարիզմից սպառնացող վտանգներին, այնու-
ամենայնիվ, լավագույն ապագայի տենչերը այդ ծանր
օրերին անգամ չ'ընացան: Այդ են վկայում բանաստեղծի
«Իմ հայրենիք, դու չպիտի մեռնես» երգի հետևյալ տողերը.

Բարդ-բարդ ամպեր թող կուտակվեն, թանձրանան,
Ամպրոպ ճալթի, շանթեր փայլին մեր վրան,
Զվհատինք, և միշտ հառաջ անվրդով,
Գիտեմ, ընկեր, տեղ կհասնենք արևով:

Բեղմնավորված անկաճների արշունով՝
Երկիրն էլի պտուղ կը տա երկունքով,
Ժամը կգա, կդադարե փոթորիկ,
Եվ հաղթություն կվաստակեն մեր որդիք:



Հովհաննիսյանի պոեզիայի ուժղին հնչող նվազներից են նաև նրա սիրո և բնության հրդերը: Իր բանաստեղծությունների այս բաժնով էլ, Հովհաննիսյանը, որոշ իմաստով, նորություն էր բերում արևելահայ բանաստեղծության մեջ: Նրա նախորդները պատմական քաղաքական խնդիրներին նվիրելով իրենց պոեզիան՝ տեղ չէին տալիս սիրո երգերին:

Հիշենք Նալբանդյանի ուղղակի խոստովանությունը այդ առթիվ:

Ներկա օրերում այլ ինչ սե քնար,
Սուր է հարկավոր կտրիճի ձեռքին,
Արյուն ու կրակ թշնամու զլսին,
Այս պիտի լինի խորհուրդ մեր կյանքի:

Ըսկ Շահազիզի «Ազատության ժամեր» բանաստեղծական թոթովանքներում տեղ գտած սիրո երգերն էլ մեծ մասամբ անարվեստ ոտմաններ էին, որոնց մեջ մարմնական վայելքների տրամադրություններ էին արտահայտված:

Հովհաննիսյանն էր, որ առանձին ուժգնությամբ ու բարձր արվեստով հնչեցրեց սիրո և բնության հրդեր: Նրա այս կարգի ստեղծագործությունները խորապես ապրած սիրո զգացմունքների արդյունք լինելով, գուրս են եկել «կյանքոտ» ստեղծագործություններ: Իր այդ բանաստեղծություններում պոետը ներդաշնակ ելևէջներով քնարերգել է իր սիրո զգացումները, որոնք երբեմն էլ արտահայտվել են ժողովրդական սիրերգների ձևով: Խիստ բազմազան են լիրիկ բանաստեղծի տարբեր տարիքում այլ և այլ տպավորությունների և տրամադրությունների տակ գրված այդ երգերը: Սիրո թախիժը, սիրո բնազդի սուբլիմացիան, անարձագանք մնացած սիրո զգացումը, մարմնական վայելքների տրամադրությունները, սիրո ոտմանտիկան, արեքցումն ու մոռացումը:

«Ճեմում էի բուրաստանում» և նման այլ երգերում
գեղեցիկ վարդի մեջ բուն դրած ողդի պատկերով պոետը
տվել է արտաքինից գրավիչ, բայց ներքուստ հիասթափեց-
նող կնոջը: Դարձյալ բնության պատկերների միջոցով «Կու-
զեի լինել կարկաշուն վտակ» և նման այլ երգերում բա-
նաստեղծն այս անգամ ըղձական եղանակով արտահայտել
է ռոմանտիկ սիրո զգացումները: Խոսքն ուղղելով յուր սի-
րուհուն, նա ասում է՝

Կուզեի լինել լուսին ամոթխած,
Արծաթի փայլով մաղերդ շոյել:

«Իզուր է հողիս» երգում տրված է անցած, այլևս կյան-
քի կոշիկի չկարողացող, անզոր սիրո զգացումը: Իր սիրո
երգերում («Սիրուն գլուխդ կրծքիս խոնարհած») Հովհան-
նիսյանը երբեմն սիրում է յուր ապրումները, Հայնեյի
նման, արտահայտել նաև երազի մեկնման ձևով, մի հան-
գամանք, որ արտահայտչական միջոցների բազմազանու-
թյուն է մտցնում այդ կարգի երգերի մեջ:

«Առաջին սեր» խորագրով բանաստեղծության մեջ,
լուսնի կախարդիչ փայլի, պայծառ աստղերի, և նիրհ մտած
բնության ֆոնի վրա, վերհուշի ձևով, քնարերգված է առա-
ջին սիրո ամոթխած զգացմունքները, երիտասարդ սիրահա-
րի իր սիրածի սրտում հղած առեղծվածները իմանալու
տենչերը:

Հիշում եմ լուսնի կախարդիչ փայլը,
Հիշում եմ պայծառ աստղերն երկնքում,
Սիրուն ամպերի թեթևաշարժ քայլը,
Եվ նիրհը բնության ծայրերի ստվերում...

Հիշում եմ ինչպես դու սիրատենչիկ,
Ամոթխած դեմքով հետս էիր ճեմում...
Եվ ես հիացմամբ մերթ դեպի երկինք,
Եվ մերթ քեզ վրա աչք էի ձգում:

Մերթ տեսնում էի քո դեմքի վրա,
Ինչպես դյուրեկան զույգ աստղեր փայլում,
Եվ մերթ կուզեի գիտենալ ի՞նչ կա,
Քո սրտում և ինչ է քեզ խռովում...

Հովհաննիսյանի այս կարգի երգերը աչքի են ընկնում նաև զգացումների բազմազանությամբ: «Երգ» բանաստեղծություն մեջ, որի համար քննադատները ամբաստանեցին պոետին իբրև «արևելցու աչքով» կնոջը դիտողի, քուչակյան ոգով գովերգված են կնոջ արտաքին բարեմասնությունները, ուր, ինչպես ժողովրդական սիրերգներում, երգիչը երջանիկ մահ է համարում յարի «ապրեշում մազերից իրեն կախ տալը», կամ նրա «մի ժպիտի համար աշխարհից հրաժարվելը» («Արի, իմ հոգյակ»): Սակայն, այսօրինակ տրամադրություններն ընդհանրապես բնորոշ չեն Հովհաննիսյանի սիրո երգերի համար: Անհատական երջանկությանը բանաստեղծը չի զոհում ամեն բան: Նրա «Ինձ մի սիրիր» և Նման այլ երգերը «Не весь я твой» Նադսոնյան բանաստեղծությունների տրամադրություններ ունեն.

Ես քեզ սիրեցի, բայց չեմ կամենում
Տալ սիրտս, հոգյակ, քեզ բնավ գերել,
Մի անկյուն նորա անմեկին խորքում,
Այլ սիրո համար ես կամիմ պահել:

Տես՝ թշվառության հազարալեզու,
Թոցը բորբոքված խնդրում է զոհեր,
Տես՝ այստեղ խռնված իրար մոտ ահու,
Վերջին են սպասում քանի անբախտներ...

Եվ դոցա համար ես սեր եմ պահում,
Այդ ճակատագրի խորթ որդոց համար,
Որոնց առաջին դուռը չէ բանում,
Մխիթարություն՝ քարասիրտ աշխարհ...

Տուր ինձ, սիրելիս, և քո սերն անբիծ,
Այս հառաչանքի հովիտը տանեմ,
Գուցե արցունքը ցաված աչքերից,
Մաշված ճակատից թախիծը խլեմ:

Բանաստեղծությունը գրված է 1886 թվին: Մենք դիտմամբ շեշտում ենք այդ հանգամանքը, ցույց տալու համար, որ Հովհաննիսյանն իր գրական գործունեության համեմատաբար վաղ շրջանումն էլ անհատական երջանկության համար չի զոհաբերել ամեն բան, մի ներքին ձայն միշտ նրա հոգու ականջին շշնջացել է այս խոսքերը.

Սիրո զվարճության մեղեդիների
Ժամանակը չէ, ով անհոգ երգիչ:

«Այնտեղ, ուր արցունք, շղթա և ավեր է», պետք է մոռանալ սեփական եսի երջանկությունը և իբրև քաղաքացի ժողովրդի ընդհանուր շահերի, տառապյալ հայրենիքին օգնելու համար ի սպաս դնել իր անձն ու եռանդը: Այդպիսի գաղափարական բարձր գիտակցությամբ են շնչում Հովհաննիսյանի սիրո երգերը, որոնց մեջ պոետի իրեալն է իր անձը այդ գաղափարներին զոհող կինը: Այդպիսի կնոջը բանաստեղծը հակադրում է ջերմոցում սնված, և մեղկության մեջ մեծացած, անհատական վայելքներից արբեցած ժամանակակից բուրժուական կնոջը: Ինչպես արդեն տեսանք, բանաստեղծի սիրո երգեքը սերտորեն կապված էին բնության հետ, բնությունասիրությունը բազմաթիվ ուրիշ երգերի հետ շեշտուն ձևով երևան է եկել նաև «Այս տվեք ինձ քաղցր մի քուն» բանաստեղծության մեջ: Բնությունը միայն ֆոն չէ բանաստեղծի երգերի համար, այլ կենդանի զգացում. բնության մեջ է, որ ամբողջում է պոետի վշտաբեկ հոգին: Բնության այդպիսի զգացում հանդես են բերել Հովհաննիսյանի նախորդներից Պեշիկթաշլյանը և Դուրյանը: Վերջապես բնության պատկերների միջոցով Հովհաննիսյանը շատ հաճախ խորհրդածել է կյանքի, մահի և այլ

«անիծյալ» հարցերի մասին, ցուցաբերելով փիլիսոփայելու
իր հակումները: «Որպես հաղթանդամ մի ծերուկ հսկա»
բանաստեղծության մեջ, ժպիտը երեսին վազող գետի ալիք-
ների պատկերով, որ սիմվոլիկ արտահայտությունն է երի-
տասարդության, սիրո ու վայելքի տրամադրություններ են
արտահայտված, որի հակադրությունն է դեպի մահը հակ-
ված ծերությունը ժայռի պատկերով:

Որպես հաղթանդամ մի ծերուկ հսկա,
Կախված է ժայռը ջրերի վրա.
Ալիքը կայտառ գնում են, գալիս,
Եվ ժայռին սիրո համբույր են տալիս:

Խաղում են անհոգ ալիքը գետի,
Յնծում են գրկած պատկերն արևի,
Եվ, որպես մանուկ ժպիտն երեսին,
Մեղմիկ շշուշով խոսում են ժայռին:

Մենք երանավետ քնքուշ նվագով,
Կը կոչենք խորքից ձկներն երամով,
Եվ ոսկեզօծված զարնան արևից,
Քեզ մեր զվարթ պարին կանենք խնդակից:

Ալիքը կայտառ գնում են, գալիս,
Սև ժայռը նախկին յուր վիշտն է լալիս...
Խաղում են ալիք, ուրախ կարկաչում,
Նա կրկին անշարժ, նա կրկին տրտում...

Ալիքների ժայռին եղած սիրո փաղաքշանքները չեն
կարողանում փարատել նրա թախիծը: Որո՞նք են ժայռի
թախծի պատճառները: Պոետը այդ մասին չի ասում, բայց
մտքի զորության մահացվում է, որ ծերությունը մոտեց-
նելով մարդկային կյանքը մահվան շեմքին, թախիծով է
պարուրում նրա հոգին: Ժայռը ծերության սիմվոլիկ
պատկերն է: Էլեգիական տրամադրություններով է տողոր-
ված Հովհաննիսյանի «Աշուն» երգը ևս: Տերևաթափը, աշու-

Նը համանուն երգում, պատկերն է մահի: Մահվան մասին
խորհրդածող բանաստեղծը նախանձում է բնությանը,
որովհետև նրա մահը հարություն ունի, իսկ մարդունը ոչ.

Ինչո՞ւ կարող ես դու մահու քողով,
Ծածկվիլ ու քնանալ անշուք ու լռիկ,
Եվ հառնել դարձյալ, երբ յուր ջերմ շնչով,
Խաղա ճակատիդ արևը գողտրիկ:

Մարդն է միայն, որին դրկում է շիրիմը անդարձ, հա-
վիտյան, որին ոչ մի գարուն և ոչ մի արև կյանքի կոչել չի
կարող: Այս տխրեղդի մեջ հանկարծ «հոգու ջահերով արե-
գակվում են բանաստեղծի մտածումները», մահվան գաղա-
փարի հետ հաշտվել չկարողացող պոետը խիզախում է փի-
լիսոփայորեն «հերքել» իր մահկանացու լինելու դառն ճշ-
մարտությունը հետևյալ եղանակով: Մարդը բնության զա-
վակն է և մեռնելով նա չի կորչում, այլ մնում է բնության
մեջ, ձուլվում բնության հետ:

Քո ծոցն եմ ձգտում, ով մայր-բնություն,
Կամիմ հաղորդվիլ քո լուռ հանգստյան,
Վսեմ խորհրդին...

Զգում եմ բերկրած, գարունդ հիշելով,
Որ այդ ցնորք չէ, կա անմահություն...
Եվ գիրկդ եմ ընկնում, հոգիս անխռով,
Քեզ կամիմ միանալ, ով մայր-ցնություն:

Նկատված է, որ Հովհաննիսյանի բնության երգերում
իշխում են գարնան, վարդի, արևի, լուսնյակի, կարկաչահոս
վտակի պատկերները: Իր հոգու խռովքն արտահայտելիս
անգամ բանաստեղծը փոթորկի, ձմռան, հեղեղի, մթամած
գիշերի և այլ համապատասխան պատկեր-համեմատու-
թյուններին չի դիմում, այլ սիրած զվարթ պատկերներին

բացառմամբ է արտահայտում իր տխուր տրամադրությունները.

Վտակը քերում արյունոտ քարեր.

Թառամեցնում է ծաղկավառ գարուն:

Հովհաննիսյանի պոեզիայում իր որոշակի արտահայտությունն է գտել նաև հայ գյուղը, շարքաշ գյուղացու անշուք կյանքը, դասակարգային հակամարտությունների հետեանքով «բնավեր» դարձած շինականի կարոտի զգացումը զոռով պոկված իր օջախի, իր սիրած յարի նկատմամբ: Պետք է նկատել, որ գյուղական կյանքը Հովհաննիսյանի մի ոտանավորի մեջ է միայն, որ ոտմանտիկ պատկերացմամբ է ներկայացված. դա «Իմ հայրենիքը տեսե՛լ ես, ասա՛», բնաբանը կրող երգն է, որ գրել է նա 16 տարեկան հասակում, երբ ուսանում էր Մոսկվայում: Հեովից վերապրելով յուր գեղեցիկ հայրենիքի կարոտի զգացումը, պատանի պոետին հայրենիքը թվացել է երանության հովիտ, նրա արտաքինը ճիշտ է, խնդալից է «կանաչում թաղված աչքիներով, շնորհատու արևի ճառագայթների ներքո, ուր շրջում է հարավո դուստրը ժպիտը աչքերին», բայց մի՞թե այդ էր հայրենիքի իրական պատկերը: Կարգալով Հովհաննիսյանի այդ բանաստեղծությունը «Իմ հայրենիքը տեսե՛լ ես, ասա՛» հարցման ձևով Թումանյանը մի պարողիա է գրում և ցույց է տալիս, որ իրական հայրենիքի ռեալիստական պատկերը շատ տխուր է, անշուք ու անզարդ է հարստահարվող գյուղացու կյանքը: Դա գեղարվեստական համոզում դարձավ նաև Հովհաննիսյանի համար, երբ նա ավարտելով Մոսկվայի համալսարանը վերադարձավ հայրենիք և մոտիկից տեսավ գյուղական կյանքը:

«Հատիկը» որոշ վերապահումով, իսկ «Գյուղի ժամը» բանաստեղծությունն ամբողջությամբ, հայ գյուղի իրական կյանքի գեղարվեստական անդրապատկերումը դարձան: «Հատիկ»-ի մեջ հանդես եկող աշխատավոր գյուղացու բերանից լսելի չէ տրտունջը, էլ չենք ասում բողբոջը, նման

Քումանյանի «Գութանի երգի» և Աղայանի «Մերմնացանի»:
Այդ հանգամանքը զարմանալի կերպով անտեսված է «Հա-
տեկ»-ում:

Լույսը բացվում է. շուտ արտը գրնամ,
Պատռեմ սուր խոփով ես կուրծքը հողի,
Իմ սիրուն հատիկ, քեզ նորան պահ տամ
Մինչև օրերը ամռան արևի:

Թաղեմ քեզ, հատի՛կ, և դարգս քեզ հետ,
Թե աստված ուզեց, դու կանաչեցիր,
Թող դարդըս մեռնի գետնի տակ անհետ,
Դու ինձ մխիթար կրկին տուն դարձիր:

Եվ ջերմ աղոթքով տիրամոր առջև
Ես մոմ կըլլառեմ, ես խոնկ կծխեմ,
Որ քեզ պարգևեմ մի առատ անձրև,
Որ քեզ միշտ սիրով նայե խնդադեմ:

Բայց թե այդ շնորհին մեղքերիս համար
Արժանի չլինեմ, ծով կդարձնեմ
Ես տաք քրտինքը ճակտիս արեվառ,
Որ քեզ, իմ հեռի՛կ, ծարավ չըթողնեմ:

Ծըլի՛ր, կանաչի՛ր, ոսկե սավանով
Ծածկիր իմ արտը ողջ ալեծածան,
Նոր այն ժամանակ անուշ շրշյունով
Տուր ջարդված սրտիս մի քուն հանգստյան:

Ուրիշ է «Գյուղի ժամը»: Այստեղ, միանգամայն ունա-
ղիստորեն, գծագրվում է գյուղական կյանքի անշուք պատ-
կերը: Մեր աչքի առաջ է հարստահարված, արցունքն աչ-
քերին, կարիքի սև ամպը ճակատին գյուղացին, որ «բնա-
վեր թռչուն» դարձած պանդխտության է գնացել աշխատելու
և իր ընտանիքին օգնելու, սակայն չկարողանալով հանգ-

ցնել «ամպի պես գոռացող» վաշխառուից առած պարտքը, ստիպված է իր ընտանիքի վերջին ապավեն՝ կաթնատու կովը հանձնել անկշտում վաշխառուին:

Հովհաննիսյանի մոտ գյուղացին չի բողոքում, այլ խոնկ է ծխում տիրամոր պատկերի առաջ, օգնություն հայցում նրանից, բայց այն ժամանակ, երբ նեղն է ընկնում, երբ երաշտ է լինում, երբ պարտատերը «ամպի պես գոռում է»: Пока гром не гремит, мужик не перекрестится. Մտաբերում ենք այս կապակցությամբ ռուսական այդ ասացվածքը: Մասամբ այդպիսի հիմքեր ունեն Հովհաննիսյանի և այլ երգերում հանդես եկած կրոնական զգացմունքները: Կրոնական ոգով է տոգորված նաև «Տիրամայր» երգը:

Մի կողմից բնության տարերքը, երաշտը, կայծակը, մյուս կողմից քյոտվան ու մորեխը խլում, փչացնում էին գյուղացու աչքի լույս ցորենը, քաղցի մատնելով նրան: Վերահաս սովից փրկելու համար բնավեր դարձած գյուղացին, ինչպես ասացինք, պանգիտի ցուպը ձեռքն առած աչքերը հառում էր հեռավոր քաղաքների կապարե հորիզոններին և գնում էր զարիբ երկիր: Տարագրության մեջ հալ ու մաշ եղած հայ գյուղացու դեպ իր հայրենական օջախը, իր սրտով սիրած յարը ունեցած կարոտի բովանդակ զգացումն է արտահայտված Հովհաննիսյանի «Ալազյազ բարձր սարին» և մանավանդ «Արազն եկավ լափին տալով» երգերում: Այդ կարգի բանաստեղծությունների մեջ Հովհաննիսյանի անհատական «սրտային» տարրը շատ ուժեղ է երեվան եկել. չէ՞ որ հարանման ապրումները ծանոթ են եղել «Օխտը սարով, օխտը տարով յարից ու հայրենիքից բաժան» բանաստեղծին: Մեր ասածն է հաստատում Հովհաննիսյանը իր հետևյալ տողերում. «Ինձ համար էլ, ասում է նա, հեռու հյուսիսում եղած ժամանակա հայրենիքի կարոտի արտահայտություն է դարձել «Արազն եկավ լափին տալով» այս երգս՝

Արազն եկավ լափին տալով,
Ժեռ քարերին, ափին տալով.
Ո՞րտեղ թաղեմ ես իմ դարդը,
Զոր գլուխս տափին տալով:

Այ իմ Արազ, ջուրդդ վարար,
Սիրուն յարիս յարաբ տեսա՞ր.
Ես չհասա իմ մուրազին,—
Արազ, յարաբ կարոտս առա՞ր:

Լինելով ժողովրդի ծոցից ելած մարդ, իր հոգեբանությամբ և մտայնությամբ հարազատ մնալով նրա հույզերին ու ապրումներին, Հովհաննիսյանն իր այս կարգի երգերում այնքան է մոտեցել ժողովրդական բանաստեղծության մտայնության ու զգալակերպին, որ նրա նման բանաստեղծությունները թվում են անանուն երգիչների գործեր, նոր ժողովրդական երգերի սերիայով, ինչպես ասում է Բրյուսովը:



Քաջածանոթ լինելով հայ և օտար ժողովրդական քառյակներին, վաղնջական ժամանակների վեպերին ու ավանդավեպերին, դիցաբանական առասպելներին ու լեգենդներին, Հովհաննիսյանն օգտագործում, գրական մշակման է ենթարկում այդ կարգի ստեղծագործությունները, դրոշմելով դրանց վրա իր աշխարհայացքի ու բարձր արվեստի կնիքը: «Լուսավորչի կանթեղը», «Վահագնի ծնունդը», «Պրոմեթեոսը» Հովհաննիսյանի այդ կարգի գործերից են: «Առասպելի ոսկյա կեղևը բացելով» Հովհաննիսյանը համահնչուն էր դարձնում այն՝ ժամանակակից դեպքերին, ներկայի շնչով ջերմացնում մեռած պատմական անցյալը: 1905 թ. ռևոլուցիայի նախօրեին մշակելով Վահագնի առասպելը, մի նոր փրկության արև էր համարում պոետը նրան հայ ժողովրդի համար, երբ գրում էր.

Յնծա՛, բոլոր վիշապ Հայաստան աշխարհ
Փրկության արև Վահագնիդ տեսար:

Հովհաննիսյանին հուզել է նաև էսքիլոսի առասպելա-
կան Պրոմեթեոսը, աստվածներից ամենից անձնազոհը,
որը կռվել է մարդկության բարորության համար աստված-
ների հետ, խլել նրանցից կրակը՝ ժողովրդին տալու հա-
մար:

Մարդկանց աչքերը ես բաց արի, տվի լույս
Նոցա խավար ըստրկացած խեղճ մտքին.
Օրը կգա, կխորտակվի Ուիմպոս
Եվ լուսավոր երկնքի տակ թև առած
Կրսավառնի ազատության վեհ հոգին:

Հովհաննիսյանի այս կարգի դիցաբանական գործերի
կողքին ուշագրավ է նաև նրա «Արտավազդը»: Այս առաս-
պելը պոետը մշակել է ոչ ըստ Եզնիկ Կողբացու, ուր Ար-
տավազդը բնրի ուժ է, այլ ըստ Խորենացու՝ որտեղ շար,
դեմոնիկ ձևով է, որը եթե դուրս գա խոր վիրապից շարա-
փոխելու է աշխարհը.

Գամի նա ելանել վրեժխնդիր հոգով
Յուր անվերջ տանջանքի թույնը մահաբեր
Աշխարհի շորս կողմը շաղ տալու մտքով,
Բայց ամուր են նորա ծանրը շղթաներ:

Այս գործով հեղինակը ընթերցողի մեջ պատմական
անալոգիայի տրամադրություններ է դարձեցնում, առաս-
պելական Արտավազդի հետ համեմատելու ցարերին ու
սուլթաններին, այս նորոգինակ դիվածին Արտավազդներին:
Հովհաննիսյանը լավատեսությամբ է սողորված մեր ժողո-
վրդի ապագայի նկատմամբ նաև այս գործում.

Հավատում ենք դեռ մենք փրկության,
Մեզ մի նոր երկնքից նոր լույս կբացվի
Եվ տեսնում ենք ահա արդեն ծիածան,
Մենք ազատ, լուսավոր մի նոր վիճակի:

Հովհաննիսյանի մշակած առասպելներից է նաև «Լուսավորչի կանթեզը»: Ապարան անունը ստուգաբանող ժողովրդական ավանդության մի բեկոր է դա, նվիրական խրանամքով մոռացության ավերից պահված, որ բանաստեղծական վեհ խոհեր է հարուցել Հովհաննիսյանին և Թումանյանին: «Մեծ է մեր հավատը հայ ժողովրդի կուլտուրական ուժի ու նրա պայծառ ապագայի վրա» — գրում է Թումանյանը, որ հենց ինքը հայ ժողովուրդը իր ազգային առասպելի մեջ նմանեցրել է մշտավառ կանթեզի, որ սրբազան Արագածի վերևից կախված է երկնքի բարձրությունից ու ոչ մի ձեռք չի հասնի նրան, ոչ մի փոթորիկ չի հանգցնի նրան: Նա հայ ժողովրդի հույսն է անմարելի ու մշտավառ¹: Թումանյանի նման Հովհաննիսյանն էլ մշակելով այդ առասպելը դիտել է այն իբրև մեր ժողովրդի հաբատե գոյության սիմվոլիկ արտահայտություն:

Այն մեր հոգու լուսո ջահն է նվիրական,
Ողջույն ազգի կենդանության երաշխիք
Եվ այդ ճրագը, եղբայր, անշեշ կլինի,
Քանի վառող Աջն է մեզ միշտ հովանի:

Գալով Հովհաննիսյանի պատմական ատաղձ ունեցող գործերին, որպիսիք են «Տղմուտը», «Ավերակը», «Վարդանանց օրը», «Մյունչաց իշխանը» պետք է նկատել հետևյալը. առաջին երեք ոտանավորներում Հովհաննիսյանը փառաբանելով մեր քաջարի նախնիներին, հակադրում է նրանց իր ապրած ժամանակակից բուրժուական սերնդին: Խոսքն

¹ «Հորիզոն», 1912 թ., № 278:

ուղղելով այդ «Բարոսական զեղխություններով» տարված-
ներին բանաստեղծն ասում է.

Ձեր նախնյացը էլ չեք նման դուք, հայեր,
Չունիք այլևս հայրենասեր այն հոգին,
Նորա մեռան, և կուրծքերը անվեհեր
Արյամբ բուսած անմահ վարդեր պսակեցին:

Նորա գլուխ չտվեցին բռնության,
Չծախեցին նորա խիղճը և ամոթ—
Դուք ինչ արիք, դուք փառավոր նախորդաց
Ստորուկ ծնած, անփառք մնած զավակներ:

«Սյունյաց իշխան» պոեմում սակայն Հովհաննիսյանը
տրամագծորեն հակառակ միտքն է արտահայտել մեր
փառավոր նախորդների նկատմամբ: Խոսքն ուղղելով նրանց,
բանաստեղծն ասում է.

Ինչ մեզ թողին մեր քաջարի գոված նախնիք,
Լացի, կոծի անփառունակ մի հայրենիք:
Շղթան սիրող ստրուկների մի բաղմոթյուն
Ահա նոցա թողած անփառունակ ժառանգություն:

«Սյունյաց իշխանը» պոեմի մեջ, որի նյութը առնված է
5-րդ դարում հայերի՝ պարսիկների դեմ մղած ազատագը-
րական պայքարի պատմությունից, պոետը խիստ յուրօրի-
նակ մոտեցում է հանդես բերում դավաճան Վասակի նկատ-
մամբ, ճիշտ է, նա ևս չի արդարացնում Վասակին, բայց
ցույց է տալիս, որ նա զղջացող հանցագործ է, որ նա ևս
չէր ուզենա հայրենիքը դարձնել թշնամու ոտի կոխան,
բայց հանգամանքները զրդեցին նրան չմասնակցել Վար-
դան զորավարի գլխավորությամբ կազմակերպված ապս-
տամբությանը, քանի որ Բյուզանդիոնը յուր խոստացած
օգնական զորքերը կռվի դաշտ չհանեց. վերջապես Վասակի
որդիները պատանդ էին տարվել Պարսկաստան, և եթե

Վասակը մասնակցեր ապստամբությանը, նրա զավակները մահվան կդատապարտվեն: Պատմական այս փաստերը նկատի ունենալով պոետը մեղմում է Վասակի մեղքը: «Մյունչաց իշխանը» գրական առումով էլ նորություն էր բերում մեր բանաստեղծական գրականության մեջ: Դա մի դրամատիկ պոեմ է հուզական շաղախով, ուր տրված է Վասակի հոգեկան ծանր տվյալտանքները, որոնք բխում էին այն գիտակցությունից, թե իր քաղաքականությունը իբրև դավաճանական քայլ է դիտվել:

Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ, միթե այլոց պես
Քեզ, իմ հայրենիք, շփրեց Վասակ:

ձայնում է նա սոսկալով դավաճանի անունը իր վրա կրե-
լուց:

Վասակի մեջ զարթնած իրարամբեր թրամադրություն-
ներն իր վարած քաղաքականության առթիվ, ներքին բա-
խումներ են ստեղծում նրա մեջ, այդ կերպ առաջ տանելով
նրա հոգու տրագիկան, որ լուծվում է նրա ինքնասպանու-
թյամբ:

Դու հավատարիմ պողպատ իմ ընկեր,
Կուրծքս պատառիր, արյունը սրտիս
Թող սև հեղեղով հերքս լվանա:

Խղճի ձայնի զարթնումը, զղջման հուրը, իր գործած
տճրի գիտակցումը «հիշողության թույնը նոր ուժով, ինչ-
պես շեկ երկաթ ուղեղն է այրում»:

Հեռու աչքիցս, տաղտուկ տեսիլներ,
Ծերունի կուրծքս դժոխք դարձրիք,
Հեռու աչքիցս, արյունոտ սուսեր,
Եվ դու, անողորմ, թշվառ հայրենիք:
Գործած հանցանքս ստվեր թունալից,
Մի օձ է խայթող իմ հոգու համար:

Մակբեթյան շունչն է հեռվից հեռու զգացվում այս դրամատիկ պոեմում: Թող խորթ հնչե մեր հեղինակի համար այսպիսի համեմատությունը: «Սյունյաց իշխանը» պոեմով Հովհաննիսյանը ցույց տվեց, որ ինքը տրորված ճանապարհով ընթացող չէ, թե՛ իբրև արվեստագետ և թե՛ իբրև պատմական անցյալը վերադնահատող:

Ամփոփելով մեր ասածը Հովհաննիսյանի այս կարգի գործերի մասին, պետք է նկատել հետևյալը: Ապրելով 80—90 և հետագա տասնամյակների վհատ մթնոլորտում, բանաստեղծը հաճախ մտքով սլանում էր պատմական անցյալը, վերհիշում նախնյաց փառքը, նրանց հերոսական գործերը դրվատելու («Վարդանաց օրը», «Ավերակ», «Տըղմուտ»): Պատմական անցյալին դիմելով այդ կերպ նա իր դժգոհությունն է հայտնում ժամանակակից ներկայից. «ուրվաճառվում էր խիղճ ու ամոթ, ուր իշխում էր Բաքոսական զեվխություններով տարված բուրժուազիան»: Ժամանակակից ներկային հակադրելով պատմական անցյալը, Հովհաննիսյանը ետ դեպի անցյալը չէր կանչում և ոչ էլ ամբողջապես իդեալականացնում անցյալը, նորից հիշենք «Սյունյաց իշխան»-ի նախերգանքը:

Ոչ միայն իր ինքնուրույն, ալ և ռուսական և եվրոպական հեղինակներից կատարած թարգմանական գործերով էլ Հովհաննիսյանը հարստացրեց մեր դրականությունը, իսկ նրա Ուլանդի «Նրգչի անեծքը» հայ թարգմանչական գրականության ոսկյա ֆոնդի մեջ մտավ: Պետք է նկատել, որ Հովհաննիսյանը թարգմանում էր այնպիսի հեղինակների, որոնք դադափարապես հարազատ էին իրեն: Այդ կարգի պոետներից էին Նադսոնը, Լեոմոնտովը, Նեկրասովը, Գյոթեն, Ուլանդը, Հերվեզը, Հայնեն և ուրիշները: Զեռնամուխ լինելով դրանց երգերի թարգմանության գործին, Հովհաննիսյանը առանց դավաճանելու բնագրի ոգուն աշխատում էր միաժամանակ իր ստեղծագործական դրոշմը դնել, հայացնել հիշյալ պոետներին: Դրա հետևանքով է, որ նրա կատարած թարգմանական և ինքնուրույն ստեղծագործու-

Ֆյունների միջև կա հարազատություն և թվում է, թե դրանք նրա ինքնուրույն երգերն են, որոնց վրա սեփական երգերից ոչ պակաս ճիգ ու ջանք է թափել նա: Դրա համար էլ, Բրյուսովի նման խստապահանջ ու ճաշակավոր բանաստեղծըն անգամ, հիացմունքով է խոսել Հովհաննիսյանի թարգմանությունների մասին, որոնք ընթերցողի մեջ առաջ են բերում բնագրի պատրանքը, երբեմն էլ, նույնիսկ մըրցում բնագրի հետ: Հովհաննիսյանի թարգմանած երգերում արտահայտված գաղափարները շատ էին թանգ նրա համար: Այդ երևում է հետևյալ փաստից: Երբ ցարական գրաքննությունը արգելեց Հովհաննիսյանի Նեկրասովից կատարած «Նոր տարի» բանաստեղծության թարգմանությունը, որի մեջ նոր ու ազատ Ռուսիայի ասեղծման միտումներ նկատելով, այն ժամանակ Հովհաննիսյանն արտասահման ուղարկեց իր այդ թարգմանությունը և տպագրել տվեց Մարսելում լույս տեսնող «Արմենիա» թերթում: Ցավով պիտի հիշել, որ Հովհաննիսյանի նման տաղանդավոր ասեղծագործ թարգմանիչը նյութական հնարավորություն չունեի թարգմանելու Հոմերոսի «Իլիական»-ը: «Եթե ես համալսարանը ավարտելուց հետո տարին տասնեղևու ամիս լծի եզան նման դատապարտված չլինեի իմ աշխատանքին, միայն ապավինած ընտանիքիս ապրուստի համար չարշարվելու, ես եթե ոչ ուրիշ բան գեթ «Իլիական»-ը վաղուց այսպես թե այնպես թարգմանած՝ կլինեի, բայց «հեղինակներն իրենց ճակատագիրն ունեն»։ Դրական աշխատանքը ինձ համար եղել է երկրորդական և երրորդական, ազատ ժամերի գործ, որովհետև երեխաներիս փորը չի կշտացել և մերկությունը չի ծածկվել»¹: Առանց վարանելու կարելի է ասել, որ միայն Հովհաննիսյանն էր, որ կարող էր հաղթահարել այդ գործի դժվարությունները, և միայն նա էր, որ պիտի խլեր «Իլիական»-ի այլ թարգմանիչների փառքը:

Հովհաննիսյանն առհասարակ քանակով հարուստ գրա-

¹ Նամակը գրված է 1919 թ. և ուղղված Կովկասի Հայոց Հրատարակական ընկերությանը:

կան ժառանգություն չթողեց: Ոմանք այդ բացատրում են նրանով, որ պոետը նյութական անապահով պայմաններ մեջ է եղել, ուրիշները դա բանաստեղծի անհատական խառնվածքով են բացատրել: Հովհաննիսյանի բանաստեղծական խառնվածքի մասին խոսելիս, պետք է նկատել և այն, որ նա մեր այն գրողների թվին է պատկանում, որոնք մեկ անգամ ներշնչումով գրելուց հետո այնուհետև ստեղծագործական վերամշակման չեն ենթարկում իրենց երգերը: Չնայած դրան, Հովհաննիսյանն իր պոետական արվեստի և բանաստեղծական հնարանքների մեջ վարպետ էր: Նա կարողանում էր բանաստեղծական խոսքը դարձնել հմայիչ ու ազդու, անհատական, անձնական, հասարակական և համամարդկայինը միացած են նրա երգերում, և այն այնպես, որ հաճախ մարդ դժվարանում է ասել, թե պոետի երգերի մեջ անհատական զգացումներ են արտահայտված, թե հավաքական: Սա Հովհաննիսյանի ստեղծագործությունների հիմնական հատկանիշներից մեկն է: Բանաստեղծական հնարանքների մեջ էլ նա այդպես է: Նրա «Արազն եկավ լափին տալով» համբավվոր երգը լինելով պոետի սեփական ստեղծագործությունը իր ոգով, արտահայտչական եղանակներով այնքան էր ժողովրդական, որ մասնագետ գրականագետներն անգամ վիճել են, թե հիշյալ երգը ժողովրդի պոետինն է, թե պոետ ժողովրդից առնված ու մշակված: Իսկ մեծագույն գնահատականն է Հովհաննիսյանի համար լեբրե ժողովրդական բանաստեղծի: Ժողովրդական երգերի պոետիկայի զինանոցի բոլոր միջոցները օգտագործում էր նա: Համագործություն, հակադրություն, պատկերավոր ոճեր, կրկնություններ, ալիտերացիա, հնչյունական նկարչություն և այլն: Համագործության սկզբունքն է կիրառված «Ալագյազ բարձր սարին», «Արազն եկավ լափին տալով» և նման այլ երգերում:

Արազն եկավ լափին տալով
ժեռ քարերին ափին տալով,
Որտեղ թաղեմ ես իմ դարդը
Չոր գլուխս տափին տալով:

Ինչպես տեսնում եք, առաջին երկտողի մեջ տրված է բնության մի պատկեր, երկրորդ երկտողում համադրված է այն երգչի հար և նման վիճակի հետ, ինչպես որ լափին տվող Արազը ժեռ քարերի ափին է խփում այնպես էլ դարդոտ պոետը իր շոր գլուխն է տափին տալիս: Իր դիցաբանական ատաղձ ունեցող երգերում—«Արտավազդը», «Կահազնի ծնունդը» Հովհաննիսյանը, ինչպես նկատված է, վարպետ կերպով օգտագործել է Գողթան երգիչների բանաստեղծական հնարքները: Իբրև լայթմոտիվ շեշտելու միջոց այդ երգերում կրկնվում են որոշ բառեր. կրկնությունից սակայն երգը չի տուժում, իրավհետև կրկնվող բառերը յուրաքանչյուր անգամ նոր առումով են գործածվում: Հաշվի առնելով այն, որ նյութը ինքն է թելադրում գրության համապատասխան եղանակ, ուստի բանաստեղծը պատմական ատաղձ ունեցող գործերում օգտագործում է դասական ոճի նմուշներ և այդ կերպ դարի ոգին արտահայտող պատրանք է ստեղծվում ընթերցողի մեջ: Այս հնարանքների հետ Հովհաննիսյանը բանաստեղծական նոր ձևերի ու տեսակների վարպետ մշակողը դարձավ: Սոնետների, երգերի, խոհական դրամատիկական պոեմների կատարյալ ու օրինակելի նմուշներ տվեց նա մեր բանաստեղծական գրականությանը: Կառուցիկ ու հնչելի հանգերով գրված Հովհաննիսյանի էմոցիոնալ ու խոսրոժալուր երգերի մի այլ արժանիքըն էլ այն եղավ, որ նա իր այդ ոտանավորներով մեր բանաստեղծական լեզվի լարողներից մեկը դարձավ: Ճիշտ է նկատել Աղայանը, որ Հովհաննիսյանը մեր գրական լեզվի չորացած երակների մեջ թարմ արյուն ներարկեց ժողովրդական ոճերով, բառերով, դարձվածքներով փարթամացրեց ու կենդանացրեց բանաստեղծական լեզուն:

Հովհաննիսյանի թողած գրական ժառանգությամբ սե-

քուճդներ են դաստիարակվել: Նրա ստեղծած գրական լավագույն տրագիդիաների հետքով ընթացավ շատերի հետ նաև Ավետիք Իսահակյանը: Այդ հանգամանքը չի ժխտում և ինքը բանաստեղծը: Հովհաննիսյանին ուղղած մի նամակում այդ առթիվ հետևյալն է գրում նա. «ես առաջին անգամ խմեցի բանաստեղծության նոր իսկական աղբյուրից, որովհետև դու ինքդ էիր ոսկեղեն աղբյուրը, որ կարկաչում էիր հայոց հին ու նոր երգերի սահմանագլխում»¹:

«Հովհաննիսյանի անունը թինդ է հանում իմ հոգին, և վերստին ապրում եմ խանդավառ պատանեկությանս այն հրաշալի պահը, երբ հոգուս աչքերի առաջ բացվեց կախարդանքի այն չքնաղ պարտեզը—նրա բյուրեղային լիրիկան: Բախտորոշ եղավ ինձ համար այդ նվիրական պահը, և ես գտա իմ ճանապարհը: Հավերժ երախտապարտ եմ և հավերժ շնորհակալ բանաստեղծության այդ մեծ մոգպետին, իմ կախարդ ուղեցույցին: Եվ բոլոր անկեղծությամբ գլուխս խոնարհում եմ նրա սրբազան հիշատակի առաջ, նրա անմահ երգի առաջ»²:

Մեր քննադատական գրականության մեջ այն միտքն է հայտնված եղել, թե Հովհաննիսյանի պոեզիան այժմ միայն պատմական նշանակություն ունի մեզ համար, որ իբր նրա երգերը մեզ չեն հուզում և այլն: Այդ իհարկե ճիշտ չէ: Հայրենական պատերազմին մասնակից մի հայ հրամանատար պատմում էր, թե ինչպես Կովկասյան նախալեռներում, հրամանատարության առաջադրանքով իրենց վաշտը բարձրանալիս է եղել մի բարձունք: Վերելքի ժամանակ, ասում է նա, նկատեցի, որ մի հայ մարտիկ սաստիկ հոգնել է և դանդաղում է: Կողքից քայլող ընկերը, նույնպես մի հայ ռազմիկ, շուտ եկավ դեպի նա և ձայնեց.

«Դեպի վե՛ր, սա՛րն ի վե՛ր, քաջասիրտ զինվոր»:

¹ «Բազմի Ձայն», 1913, № 89:

² «Սովետական գրականություն», 1944, № 9, էջ 59:

Ինչպես տեսնում եք, Հովհաննիսյանի երգերի կատարած դերը միայն պատմական չէ, նրանց մի մասը հնչում է մեր օրերում էլ:

Հովհաննիսյանի գողարիկ երգերը երբեք չսկսեք է մեռնեն ժամանակի հոլովումից: Նրանք, ինչպես ճիշտ կերպով նկատել է Իսահակյանը, կապրեն այնքան ժամանակ, որքան ժամանակ «Արազը կտքա լափին տալով»:



Պատ. իսմբագիր Հ. ՄԿՐՏՁՅԱՆ

ՎՖ 11966 Պատվեր № 678. Տիրաժ 3000 հեղ. 1,5 մամ., տպ. 2 1/2 մամ.
ստորագրված է տպագրության 1946 թ. 28 հոկտեմբերին

ՀՍՍՌ Մեխատրոնիկայի Սովետին կից Գորիշդրաֆ. և Հրատ. Վարչության
№ 3-րդ տպարան, Երևան, 1946

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



220031793

[304]

ԳԻՆԸ 3 Ռ.

1 A $\frac{R}{31793}$